

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/2

4 փետրվարի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 15.01.2013թ-ի նիստում քննության է առնվել <Տրանս Լոջիստիկ Քոբըսիս> ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 08.11.2012թ. թիվ 1002200 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն չեղյալ են համարվել վերոգրյալ ստուգման ակտի 2-րդ և 5-րդ կետերը: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.04.2012թ. թիվ 1002200 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Տրանս Լոջիստիկ Քոբըսիս> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 08.11.2012թ-ին կազմվել է թիվ 1002200 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջարկվել ընդամենը 1.861.496 դրամ:

<Տրանս Լոջիստիկ Քոբըսիս> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

1. Շահութահարկ

Ստուգման ակտում նշված է, որ ընկերության կողմից 2009, 2010, 2011թթ համար ՀՏ ներկայացված շահութահարկի հաշվարկում համախառն եկամտից առանց հիմնավորող փաստաթղթերի նվազեցվել են ծախսեր համապատասխանաբար 2009թ. 525000 դրամ, 2010թ. 525000 դրամ և 2011թ. 525000 դրամ: Խախտվել է <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Սակայն, վերը նշված ծախսերը շահութահարկի հաշվարկում համախառն եկամտից նվազեցվել են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, որոնք բավարարում են ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշման պահանջներին:

Չի խախտվել նաև <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, քանի որ տվյալ ծախսերը հաշվետու տարվա ընթացքով հանգեցրել են ընկերության պարտավորությունների աճին և սեփական կապիտալի նվազմանը, ինչպես նաև տվյալ ծախսերն անհրաժեշտ են համարվում անմիջականորեն ծառայությունների մատուցման, իրացման և շուկայում առաջխաղացման համար:

2. Ոչ ռեզիդենտի շահութահարկ

Ստուգման ակտում նշված է, որ ընկերության կողմից 2010 և 2011թթ խախտվել է <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 64-րդ և 66-րդ հոդվածների պահանջները.

3. Ավելացված արժեքի հարկ

Ստուգման ակտում նշվել է, որ ընկերությունը խախտել է <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները:

Վերը նշված 2-րդ և 3-րդ կետերի վերաբերյալ 08.04.2010թ. թիվ 1007147 ակտի համաձայն Մյասնիկյանի ՀՏ-ի կողմից <Տրանս Լոջիստիկ Քոբըսիս> ՍՊԸ արձանագրվել էր նմանատիպ խախտումներ, որոնք 30.11.2010թ. ՀՀ վարչական դատարանի ՎԴ/2270/2180/10 վճռով ճանաչվել է անվավեր: Վերջինս Մյասնիկյանի ՀՏ կողմից բողոքարկելուց հետո ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից թողնվել է անփոփոխ վարչական գործ թիվ ՎԴ/2270/05/10 որոշումը, որը ուժի մեջ է մտել 01.04.2011թ-ից:

Վերը նշված վարչական վերաքննիչ դատարանի վարչական գործ թիվ ՎԴ/2270/05/10 որոշումը, համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի, համարվում է նախադեպ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած

պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ստուգման ակտով շահութահարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունների վերաբերյալ նշվեց հետևյալը:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերության կողմից 2009, 2010, 2011 թվականների համար ՀՏ ներկայացված շահութահարկի հաշվարկում համախառն եկամտից նվազեցվել է Հայաստանի տրանսպորտային առաքողների միությանը կատարված անդամավճարի տարեկան գումարները՝ 525.000 դրամ յուրաքանչյուր տարվա համար: Խախտվել է <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջները, այն է՝ համախառն եկամտից թույլատրվում է կատարել <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ գլխով նախատեսված նվազեցումները: Այսինքն, ընկերությունը 2009, 2010, 2011 թվականների համար պակաս հարկվող շահույթ է հաշվարկել ընդամենը 1575000 դրամ: Արդյունքում հիմք ընդունելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի, <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23, 25 և 27 հոդվածների պահանջները շահութահարկի գծով գանձման է առաջադրվել ընդամենը 510917 դրամ:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովին ներկայացվեցին համապատասխան հաշիվները, որոնք վկայում են ընկերության կողմից Հայաստանի տրանսպորտային առաքողների միությանը կատարված անդամավճարների փաստը:

Քննարկվող դեպքում անկախ վերագրյալ հաշիվները ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ հաստատված կարգով ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջներին բավարարելու հանգամանքից, այդ հաշիվներում արտացոլված անդամավճարների գումարները հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

Ինչ վերաբերվում է ստուգման ակտով ոչ ռեզիդենտի շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորություններին, ապա նշվեց հետևյալը:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 24.12.2010թ. թիվ 1013019 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Տրանս Լոջիստիկ Քոըրսիս> ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմվել է ՕԿՎ 11.02.2011թ-ի թիվ 1013019 ստուգման ակտը:

Տվյալ դեպքում կարևոր է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 08.11.2012թ. թիվ 1002200 և ՕԿՎ 11.02.2011թ-ի թիվ 1013019 ստուգման ակտերով ոչ ռեզիդենտի շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները նույնաբովանդակ են, թեև վերաբերվում են ստուգման տարբեր ժամանակաշրջանների:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ վճարեկ դատարանի 05.12.2012թ-ի թիվ ՎԴ/1115/05/11 որոշմամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության բերած վճարեկ բողոքը վերադարձվել է, որի հետևանքով նույն գործով ՀՀ վարչական դատարանի 14.04.2012թ-ի վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕԿՎ 11.02.2011թ. թիվ 1013019 ստուգման ակտի 1-ին կետն անբողջությամբ և 4-րդ կետը՝ 1.801.800 ՀՀ դրամ պարտավորության առաջադրման մասով, ճանաչվել է անվավեր:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 08.11.2012թ. թիվ 1002200 ստուգման ակտի 2-րդ և 5-րդ կետերը ենթակա են չեղյալ համարման:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային

մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է բացասական եզրակացություն:

Հանձնաժողովը, վերանայելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը գտնում է, որ ընկերության գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 08.11.2012թ. թիվ 1002200 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ՔԱՐՍԵՂՅԱՆ

